Ողջու՛յն, Թաթու՛լ,

Երբ կարդացի նամակդ և տեսա, որ ինձ դիմում ես որպես «հարևան», չեմ կարող նկարագրել, թե ինչ զգացմունքներ ունեցա: Մի պահ կարծեցի, թե քաղցր ու սիրալիր տոնով ինձ են դիմում հարազատ թաղամասիս հարևանները: Իսկապես, շատ հազվագյուտ հարևաններ կան, որ կարողանում են այսքան մոտ, բայց միևնույն ժամանակ այսքան հեռու լինել միմյանցից, փաստորեն մենք էլ նրանցից մեկն ենք: Սակայն վաղ թե ուշ այդ հարևաններն սկսում են տեսնել, որ իսկապես միմյանցից այդքան հեռու մնալն անիմաստ է, և սերն ու միասնության ուժը կարող են երկու կողմերին էլ տանել բարգավաճման: Ես մեզ պես հարևաններին կտրականապես չեմ ուզում այսպես տեսնել: Իմ տեսած հարևանները միշտ արժևորել են համերաշխությունը, հարգանքը, անկեղծությունը, ծիծաղը, միասին ուրախանալը, սիրելն ու սիրվելը, հարևանություն անելը: Այդպիսին էինք մենք ժամանակին, տարիներ առաջ: Սակայն դեռ ուշ չէ:

Անունս Իլկին է: Ես 20 տարեկան եմ: Ապրում եմ Բաքվում: Մասնագիտությամբ տնտեսագետ եմ, սակայն որպես սիրողական մասնագիտություն՝ զբաղվում եմ դերասանությամբ: Սոցիալապես ակտիվ երիտասարդ եմ: Խաղաղարարության թեմայով մասնակցել եմ մի շարք դասընթացների, ինչպես նաև այդ թեմայով դերախաղ եմ ունեցել:

Վրաստանում տարածաշրջանային երկրների հետ միասին մի նախագծում առաջին անգամ հնարավորություն ունեցա շփվել հայաստանցի երիտասարդների հետ: Ծանոթացա շատ անկեղծ և սիրալիր երիտասարդների հետ: Դասընթացի ժամանակ հասկացա, թե որքան նմանություններ կան թե՛ կենցաղային մակարդակում և թե՛ մեր բնավորությունների մեջ, և դա ինձ համար հաճելի էր:

Այո՛, ավելի առաջադեմ, սիրով լեցուն, ավելի բարեկեցիկ ապագայի համար պետք է խաղաղարարության ուղղությամբ գոնե ինչ–որ բաներ ձեռնարկենք մեր շրջապատում: Այս հակամարտության ձգձգումը ոչ մեկին օգուտ չի բերում, այլ միայն սարսափելի վնասներ է հասցնում: Ատելությունը սպանում է, իսկ սերը՝ ապրեցնում:

Ինչո՞ւ պետք է թշնամիներ լինենք՝ միմյանց այսքան մոտ լինելով հանդերձ: Ինչո՞ւ չենք կարողանում այցելել միմյանց երկրներ: Ինչո՞ւ լավ ապագայի համար համատեղ նախագծերում չաշխատենք: Ախր մենք շատ հնարավորություններ ունենք, որոնք կարող ենք միասին արժևորել: Հողը, երգը, ուտելիքը, ավանդույթները, սահմանները, հարստությունները կարևոր չեն: Կարևորը մարդն է: Կարևորը սերն ու զգացմունքներն են: Ապրել և ապրեցնելն է:

Վրաստանում հանդիպելու վերաբերյալ առաջարկդ ընդունում եմ սիրով:

Իլկին